ՊԱՇՏՕՆԱԿԱՆ

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՒՈՐ ԽՈՐՀՐԴԻ ԱՐՏԱՀԵՐԹ ԺՈՂՈՎ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Սեպտեմբերի 1-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախագահությամբ տեղի ունեցավ Գերագույն հոգեւոր խորհրդի արտահերթ ժողով:

Գերագույն հոգեւոր խորհուրդը վրդովմունքով եւ մտահոգությամբ անդրադարձավ Բուդապեշտում 2004 թ. ՀՀ ՁՈՒ սպա Գուրգեն Մարգարյանին ազգային ատելության հողի վրա քնած վիճակում դաժանաբար սպանած Ադրբեջանի ՁՈՒ սպա Ռամիլ Սաֆարովի՝ Հունգարիայի իշխանությունների կողմից արտահանձնման եւ Ադրբեջանի նախագահի կողմից նրան ներում շնորհելու իրողությանը եւ հանդես եկավ հետեւյալ հայտարարությամբ.

«Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին խստիվ դատապարտում է մարդասպան Ռամիլ Սաֆարովին Հունգարիայի իշխանությունների կողմից Ադրբեջանին հանձնելու եւ Ադրբեջանի նախագահի որոշմամբ ներման միջոցով ոճրագործին արդարացնելու փաստը: Կատարվածը հերթական դրսեւորումն է Ադրբեջանի իշխանությունների որդեգրած հայատյաց քաղաքականության: Ցավոք, ժողովրդավարության եւ արդարադատության սկզբունքներ դավանող ԵՄ անդամ Հունգարիան՝ ոտնահարելով եւրոպական արժեհամակարգի բարոյական նորմերը, պահարակելի համագործակցությամբ սատարեց Ադրբեջանում հերոսացված մարդասպանին ազատ արձակելու նենգ ծրագրին, որը հղի է ազգային եւ կրոնական պատկանելության հողի վրա սպանությունների վտանգով: Մարդկային կյանքը ասպվածատուր է, եւ կանխամտածված մարդասպանության ոճրագործությունը՝ ոճիր մարդկության եւ Աստծո դեմ:

Կոչ ենք ուղղում Հայ Եկեղեցու բոլոր սպասավորներին, աշխարհասփյուռ մեր ժողովրդի հավատավոր զավակներին միասնական ոգով բողոքի իրենց ձայնը հնչեցնելու տեղական հոգեւոր եւ աշխարհիկ իշխանությունների առջեւ՝ հանուն մեր ազգային իրավունքների պաշտպանության: Դիմում ենք նաեւ մեր Քույր եկեղեցիներին եւ կրոնական բոլոր կազմակերպություններին՝ դատապարտելու այս իրողությունը եւ իրենց ձայնը բարձրացնելու հանուն արդարության եւ ճշմարտության»:

Գերագույն հոգեւոր խորհուրդը նաեւ խնդրեց Ամենայն Հայոց Կաթողիկոսին այս առնչությամբ դիմելու կրոնապետերին, ինչպես նաեւ առանձին պետությունների, միջազգային կազմակերպությունների եւ կրոնական ու հասարակական կառույցների ղեկավարներին:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ